

Մամլոյ Հաղորդագրութիւն

Creative Armenia-ն և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը հայտարարում են նորարար տաղանդավոր արվեստագետներին օժանդակող ծրագրի մեկնարկը

Անմիջապես Հրատարակութեան Համար

Creative Armenia-ն և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) սիրով հայտարարում են «Creative Armenia - AGBU» Fellowship-երի մեկնարկը, որոնք կօգնեն բացահայտել ու աջակցել արվեստի տարբեր ոլորտներում գործող ստեղծարար տաղանդավոր արվեստագետներին, ինչպես նաև կնպաստեն նրանց առաջխաղացմանը: Ֆինանսավորում, մենթորություն ու առաջխաղացման հատուկ ռազմավարություններ ներառող այս մեկամյա ծրագրի միջոցով Creative Armenia-ն և ՀԲԸՄ-ն հնարավորություն կընձեռեն նորարար արվեստագետներին հասնելու ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային ստեղծագործական վերելքի:

«Որպես ազգ՝ մենք իրոք հպարտանում ենք մեր խորաթափանց գրողների, երաժիշտների, կինոգործիչների ու նկարիչների թողած ժառանգությունով: Բայց միննույն ժամանակ ի՞նչ ենք մենք անում ապագա ստեղծարար արվեստագետների բացահայտելու և աջակցելու ուղղությամբ», - ասաց ռեժիսոր և սցենարիստ, Creative Armenia-ի հիմնադիր տնօրեն Կարին Հովհաննիսյանը: «Creative Armenia - AGBU Fellowship-երը մեր պատասխանն են այս հարցին»:

Այս ծրագիրը ՀԲԸՄ-ի և Creative Armenia-ի առաջին համագործակցությունն է: Կազմակերպությունների ռազմավարական գործընկերության մեկնարկը տրվել է մայիս ամսին: Creative Armenia-ն մշակութային հիմնադրամ է հայ ժողովրդի համար, որը նպատակ ունի հայտնաբերել, զարգացնել ու խթանել ստեղծարար տաղանդավոր արվեստագետների արվեստի տարբեր ճյուղերում: Սփյուռքահայության վստահությունը վայելող ՀԲԸՄ-ն տասնամյակներ շարունակ հնարավորություններ է ստեղծում հայ արվեստագետների համար՝ շարունակելու կրթությունը և ցուցադրելու իրենց տաղանդն աշխարհի տարբեր լսարանների առջև: Կազմակերպությունը հաստատագրել է իր աջակցությունն արվեստին ԱՄՆ-ում (2012թ.-ին) եւ Ֆրանսիայում (2016թ.-ին) կատարողական արվեստների բաժինների ստեղծմամբ:

«Այս համագործակցությունն աննախադեպ հնարավորություններ է ստեղծում արվեստագետների համար՝ ընդլայնելու իրենց լսարանն ու ճանաչում ձեռք բերելու Հայաստանում և աշխարհում», - ասաց պրոդյուսեր Էրիկ Իսրայելյանը, ով ՀԲԸՄ-ի Կենտրոնական խորհրդի անդամ է և Creative

Armenia-ի խորհրդատվական խորհրդի հիմնադիր անդամ: «Այս fellowship-ը կօգնի խթանել հայկական արվեստն ու մշակույթը համաշխարհային թատերաբեմում»:

Creative Armenia - AGBU Fellowship-երը տրամադրվում են նորարար արվեստագետներին ստեղծարար բոլոր ոլորտներից՝ ներառյալ կինոյի, երաժշտության, գրականության, կերպարվեստի, թատրոնի, դիզայնի և լուսանկարչության: Մեկ տարվա ընթացքում մասնակիցները կունենան ոլորտի առաջատար մասնագետների հետ կապեր հաստատելու հնարավորություն, ինչպես նաև մշակված ռազմավարություն զարգացնելու, ներկայացնելու և խթանելու իրենց նախագծերը՝ մենթորների հետ անհատական հանդիպումների և աշխատաժողովների միջոցով: Նրանց կտրամադրվի նաև 5,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ: Fellowship-երին կարող են դիմել ազգությամբ հայ արվեստագետները, ինչպես նաև նրանք, ովքեր մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայկական մշակույթի նկատմամբ: Մասնակիցների ներկայությունը Հայաստանում պարտադիր չէ:

Հայտերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 15-ը creativearmenia.org/fellowships և agbu.org/creativearmenia կայքէջերում:

Հարցումների համար գրեք Ալեք Մուհիբյանին alec@creativearmenia.org հասցեով եւ Հայկ Արսենյանին harsenyan@agbu.org հասցեով:

https://youtu.be/Sq0Wh34z_Ts

2017թ.-ին հիմնադրված Creative Armenia-ն մշակութային նորարարական հիմնադրամ է, որը մշակում ու իրագործում է մշակութային վերելքին ուղղված քաղաքականություն: Creative Armenia-ի հիմնադիր խորհրդի անդամներն են՝ Սերժ Թանգյանը, Էրիկ Իսրայելյանը, Արսինե Խանջյանը, Էրիկ Պողոսյանը, Կառլա Կարապետյանը, Միմոն Աբգարյանը և Մայքլ Արամը: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ creativearmenia.org:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) սփյուռքի հնագույն, համաժողովրդական և համահայկական կազմակերպությունն է: Հիմնված լինելով 1906 թվականին՝ ՀԲԸՄ-ի գլխամասային գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: ՀԲԸՄ-ը կրթական, մշակութային և մարդասիրական ծրագրերի միջոցով պահպանում և զարգացնում է հայկական ինքնությունն ու ժառանգությունը՝ յուրաքանչյուր տարի ազդեցություն ունենալով աշխարհով մեկ սփռված շուրջ 500,000 հայերի կյանքի վրա: ՀԲԸՄ-ի և իր աշխարհասփյուռ ծրագրերի մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար կարող եք այցելել՝ www.agbu.org:

PHOTO CAPTIONS:

creative-armenia-agbu01.jpg: Creative Armenia-ի խորհրդի անդամ Սերժ Թանգյանը խոսում է կազմակերպության վաղ որոշ ձեռքբերումներից:

creative-armenia-agbu02.jpg: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և նրա կինը՝ Աննա Հակոբյանը, ՀՀ Մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը, Creative Armenia-ի Ծրագրերի և արտադրության տնօրեն Տաթևիկ Մանուկյանը, ՀԲԸՄ Հայաստանի գործադիր տնօրեն Դավար Կազանջյանը հյուրերի շարքում են: Փաշինյանը, Մակունցը և Կազանջյանը շնորհավորական ուղերձով հանդես եկան միջոցառման ժամանակ

creative-armenia-agbu03.jpg: Creative Armenia-ի հիմնադիր տնօրեն Կարին Հովհաննիսյանը խոսում է ՀԲԸՄ Հայաստանի հետ համագործակցության ստրատեգիական կարևորության մասին:

Յանելեալ Տեղեկութեանց համար - Կապ

AGBU Press Office

55 East 59th Street

New York, NY 10022-1112

Phone: 212.319.6383

Email: communications@agbu.org